Ձեռագրի գրչության ժամանակը համընկնում է Արևելյան Հայաստանի խաղաղ և համեմատաբար բարգավաճ տարիներին, երբ առկա էին տնտեսական կյանքի զարգացման քիչ թե շատ տանելի պայմաններ։ Այս շրջանում մեծ թվով վանքեր ու եկեղեցիներ վերանորոգվեցին։ Հատկանշական է, որ շատ եկեղեցիների՝ Էջմիածնի մայր տաճարի, Հռիփսիմեի, Մուղնու, Դարաշամբի, Թադեի, և ինչպես վերը նշվեց, նաև Ակոռու Ս. Հակոբա վանքի կաթողիկեները (զանգակատներ) այս տարիներին են կառուցվել կամ վերանորոգվել։ Դարասկզբի մեծ արհավիրքներից բավական ժամանակ էր անցել, գյուղերն ու ավանները մասամբ վերաշինվել էին։ Նվիրատվական արձանագրությունների տվյալներով, XVII դարի 60-ական թվականներին Ակոռու բնակչությունը շուրջ 250 ծուխ է եղել, այսինքն միջին հաշվով 1250—1500 շունչ[8]։ Ամենայն հավանականությամբ մեկուսի և մասամբ անմատչելի վայրում գտնվելով Շահ-Աբբասի մեծ գաղթի ժամանակ տեղահանման չի ենթարկվել։ Առաքել Դավրիժեցին տեղահանման ենթարկված վայրերի մեջ Սուրմալին ու Մասյացոտնը չի հիշում։

Անհավանական չէ, որ Արաքսի ձախափնյա շրջանի գյուղերից և այլ վայրերից, ովքեր որ կարողացել են դուրս պրծնել գաղթի հոսանքից, ապաստան են գտել Ակոռիում։ Այսպես օրինակ նվիրատուների մեջ բազմիցս հիշվող փառակեցիները պետք է որ եկած լինեն Նախիջևանի Գողթան գավառի Փառակա գյուղից։ Հիշված են նաև այլ դրսեցիներ, ինչպես օրինակ «ջուղայեցի Եղնաբախշը», «դաստակցի Վելիճանը», «ղափանցի մահդասի Ասլանը», «Ըռըմեցունց Պետրոսը» և այլն։ Քյոթուկի տվյալները թույլ են տալիս ասելու, որ XVII դդ. վերջերին Ակոռու բնակչությունը անհամեմատ ավելի շատ է եղել քան XIX դդ. 30-ական թվականներին, երբ Ի. Շոպենի վկայությամբ, գյուղավանի բնակչության ընդհանուր թիվը 1358 շունչ էր, որից 342-ը նորաբնակներ էին, գաղթած Արևմտյան Հայաստանի մերձակա շրջաններից[9]։

Զաքարիա Ագուլեցու վկայությամբ երթևեկությունը դեպի Ակոռի կատարվում էր Խոր-Վիրապի վրայով։ Այդ հաստատում են նաև Ֆ. Պարրոտն ու մյուս ճանապարհորդները։ Այս դժվարին վերելքը Զաքարիա Ագուլեցին կատարել է դեպի Ս. Հակոբա վանքը ուխտագնացության նպատակով, 1672 թ.. «Ամայ գնալ գալն ԺԳ (13) աղաջ կայ. դժվար ճանապարհ է»,— գրում է նա[10]։ Այդ նշանակում է, որ Խոր-Վիրապից մինչև Ակոռի ձգվող ճանապարհի երկարությունը մոտ 36 կիլոմետր էր։

Զաքարիա Սարկավագը, պատմելով 1679 թ. Երևանի երկրաշարժի մասին, ավելացնում է, որ Ազերբայջանի վեզիր Միրզա-Իբրահիմը գալով Երևան, իր մոտ է կանչում շրջակա խաներին և սուլթաններին, հանձնարարելով նրանց վերականգնել բերդը, Հրազդանի կամուրջը և այլ շինություններ և կարգի բերել քաղաքի ջրամատակարարումն ու ոռոգման ցանցը։ Հրավիրվածների մեջ եղել է նաև Ակոռիի սուլթանը[11]։ Այս փաստը խոսում է հիշյալ թվականներին Ակոռու վարչական նշանակության մասին։ Ըստ Շոպենի 1828 թ. գրավումից

---

8 *Եթե հաշվի առնենք, որ ձեռագրից բավական թերթեր կան պոկված, որոնց վրա նույնպես կարող էր այլ բնակիչների անուններ գրանցված լինել, ապա թվում է, թե բնակչության թիվը 1500 շնչից ավելին պետք է եղած լինի։*

9 *Шопен, էջ 563—566։*

10 Զաքարիա Ագուլեցի, *Օրագրություն, Երևան, 1938, էջ 109։*

11 Զաքարիա Սարկավագ, *Պատմագրություն, Վաղարշապատ, 1870, հ. 2, էջ 105։*